ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---»---------- 2020թ. **N----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 88-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի սեփականություն համարվող գույքի կառավարման կարգը հաստատելու մասին» N 88-Ն որոշման հավելվածի 8-րդ գլխի 31-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«31. Համայնքային գույքն անհատույց օգտագործման իրավունքով կարող է տրամադրվել՝

1) պետությանը.
2) հասարակական կազմակերպություններին, հիմնադրամներին և այլ ոչ առևտրային կազմակերպություններին.
3) միջազգային կազմակերպություններին.
4) քաղաքացիներին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ Գ. ԵՐԻՑՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 88-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդհոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերում փոփոխություն կամ լրացում կատարում է միայն այդ նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը:

Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքի կառավարման կարգ»-ի 8-րդ գլխի 31-րդ կետի համաձայն՝համայնքային գույքն անհատույց օգտագործման իրավունքով կարող է տրամադրվել՝

1) պետությանը.
2) լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց.
3) հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին.
4) միջազգային կազմակերպություններին.
5) քաղաքացիներին.
6) անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ կազմակերպությունների:

Սույն նախագծով առաջարկվում է հանել 8-րդ գլխի 31-րդ կետի 2-րդ և 6-րդ ենթակետերը՝ սահմանելով, որ համայնքային գույքն անհատույց օգտագործման իրավունքով չի կարող տրամադրվել լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ այլ կազմակերպությունների:

Երևան համայնքը չունի առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով համայնքային գույքը տրամադրելու որևէ պարտավորություն և համայնքապատկան գույքը պետք է տրամադրի միայն այն ոչ առևտրային կազմակերպություններին, որոնք գործում են ի նպաստ համայնքի, մատուցում են համայնքահեն կրթական, առողջապահական, սոցիալական և այլ ծառայություններ:

Միևնույն ժամանակ, լրատվամիջոցները և առևտրային կազմակերպությունները պետք է գործեն որևէ քաղաքական ազդեցությունից անկախ և չպետք է ֆինանսավորվեն համայնքի բյուջեից:

Եթե լրատվամիջոցները կամ առևտրային կազմակերպություններն իրականացնում են ոչ առևտրային և շահույթ չհետապնդող գործունեություն, ապա կարող են դիմել Երևան համայնքին՝ բարեգործական ծրագրի կամ իրենց հիմնած հասարակական կազմակերպության գործունեության համար համայնքային գույքի նկատմամբ անհատույց օգտագործման իրավունքի ձեռք բերման նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ Գ. ԵՐԻՑՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 88-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N88-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չիա առաջանում։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 88-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N88-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում։

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ Գ. ԵՐԻՑՅԱՆ